ԱԶԳԱՅԻՆ.

—

Անցեալ 4-ին Սրբոց Հարցն Եգիպտացւոց տօնի օրը վայելուչ պատշաճաւորութեամբ կատարուեց Վեհափառ Հայրապետի ա-նուանակոչութեան յիշատակը։

Վեհափառ Հայրապետը հանդիսաւոր թափօրով Եկեղեցի եկաւ։ Ցատկացեալ մաղթանքը կատարուեց Վեհարանի Ընդունելութեան Դահլիճում. Վեհափառ Հայրապետը Պահպանիչով օրհնեց բոլորին և խօսքը դէպի հոգևորականները դարձնելով՝ ասաց. «Անարատ կեանք և սուրբ վարք սրբոց հարցն Եգիպտացւոց օրինակ լիցին մեզ ամենեցուն, կեանք մեր և վարք օրինակ լիցին ժողովրդեան մերում. որպէս զի տեսցեն զգործս մեր բարիս և փառաւորեսցեն զՀայր մեր որ յերկինս է» . . . . ։ Ի շնորհաւորութիւն անուանակոչութեան Վեհափառ Հայրապետի՝ Նորին Վեհափառութեան սուրբ Աջը համբուրեցին և օրհնութիւնը առան միաբանական ուխտը։ Ճեմարանականք Վաղարշապատու հոգևոր-ծխական դպրոցաց երկսեռ աշակերտները և այլք. միաբանից սեղանատանը հանդիսաւոր ճաշ և երեկոյեանը ճրագալոյց կար։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Պատկի սուրբ խորհուրդը կատարելու համար մեր ժողովրդեան մէջ զանազան տարակուսութիւն կան, ոմանք կարծուումեն թէ մի և նոյն քահանայն մի և նոյն օրը երկու պատկի խորհուրդ չէ կարող կատարել, այլք թէ մի և նոյն եկեղեցում՝ երկու պատկի խորհուրդ չի կատարուիլ. այս տարօրինակ կարծիքները ոչինչ հիմնաւոր պատճառ չունին, այլ՝ թէ մի և նոյն եկեղեցում երկու և շատ պատկի խորհուրդ կարող են կատարուել, և թէ մի և նոյն քահանայն կարող է մի և նոյն օրը երկու և աւելի պատկի խորհուրդներ կատարել։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

Պանդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս 18 Դեկտեմբերի ընդ համաբաւ 740 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արականաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Ջաջուռ կեղջ՝ բարեկրօն Ցարութիւն քահանայն տէր Ռափայէլեանց և պատուելիք՝ երեցփոխան Մխիթարն Ղազարեանց և Կարապետն Պետրոսեանց։

—